ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 6. 1958 Общественные науки

ՀԱՂՈՐԴՈՒՄ-ԵՐ

ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՀԱՅ ՌԱԶՄԻԿՆԵՐԻ ՈՒՆԵՑԱԾ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սովետական Միության Հայրենական Մեծ պատերազմը մեր երկրի ժողովուրդների պատմության մեջ մի հերոսական ժամանակաշրջան է։

Այդ ծանր ու դաժան պատերազմում ՍՍՌՄ բազմազգ ժողովուրդները Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ համաշխարհային պատմական նշանակություն ունեցող հաղթանակ նվաճեցին գերմանական ֆաշիզմի և ճապոնական իմպերիալիզմի դեմ։

Սովետական նորագույն պատմագրությունը զգալի գործ է կատարել այդ կարևորագույն ժամանակաշրջանի պատմության ուսումնասիրման և լուսաբանման ուղղությամբ։ Այդ նպատակով ինչպես միութենական բոլոր ռեսպուբլիկաներում, այնպես էլ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտին կից ստեղծվել է Հայրենական Մեծ պատերազմի պատմության կաբինետ։

Հայրենական Մեծ պատերազմի պատմության կաբինետի կոլեկտիվի առջև դրված է մի կարևոր պրոբլեմ՝ հավաքել Հայրենական Մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցությանը վերաբերող նյութերը, հետազոտել, մշակել և հրատարակության պատրաստել առանձին աշխատություններ։

Այս ուղղությամբ անցյալ տարիների ընթացքում կատարվել է զգալի աշխատանք։ Վերջին ժամանակներս ձեռք են բերվել բազմաթիվ կարևոր փաստաթղթեր, որոնք լուսաբանում են հայ ժողովրդի անձնուրաց սխրագործությունները պատերազմի տարիներին թե՛ ռազմաճակատում և թե՛ թիկունքում։

Կաբինետի հավաքած նյութերի հիման վրա հրատարակվել են ավելի քան 20 անուն գիրք և բրոշյուր։ Պաշտպանվել են մի քանի թեկնածուական և դոկտորական դիսերտացիաներ, գրվել են մի շարք դիպլոմային աշխատանքներ։

Կաբինետի արխիվը վերջերս հարստացավ գեներալ-մայոր Քրիստափոր Ալավերդովի, Տիգրան Մելքումյանի, Կոստանդին Լազարևի, Ստեփան Կարճիկյանի, գնդապետ Անդրանիկ Սարգսյանի, լեյտենանտ Արտաշես Գամարյանի, կապավոր Խորեն Նարիմանյանի գործերով, որոնց մասին կաբինետը մինչև այժմ տեղեկություններ և նյութեր չուներ։

Այդ նոր հայտնաբերված փաստաթղթերից ուշագրավ են գեներալ-մայոր Քրիստափոր Նիկոլայի Ալավերդովի մասին եղած նյութերը։

Ք. Ն. Ալավերդովը հայ ժողովրդի այն զավակներից է, որը գեներալի աստիճանի էր հասել դեռևս սովետա-ֆիննական պատերազմի ժամանակ «Մաններհայմի» գիծը ճեղքելու և թշնամու «անհաղթահարելի» ամրությունը-

ները ոչնչացնելու համար։ Գտնվելով սահմանագլխին՝ նա առաջինը ընդունեց գերմանական ֆաշիզմի հարձակումը մեր երկրի վրա և առաջին իսկ օրվանից մտնելով մարտի մեջ, հերոսաբար ոչնչացնում էր սովետական հողն արատավորող ֆաշիստական հրոսակախմբերին։ Սակայն անհավատար մարտերից մեկում նրա դորամասը շրջապատվում է թշնամու գերակշիռ ուժերով։ Շրջապատման մեջ ևս Ալավերդովի դորամասը մղում է ծանր և համառ մարտեր թշնամու օղակից դուրս գալու նպատակով, բայց այդ նրան չի հաջողվում։ Դրանից հետո երկար ժամանակ գեներալ-մայոր Ֆ. Ն. Ալավերդովի մասին տեղեկություններ չկային։

Միայն վերջերս, ձեռք բերած նյութերից պարզ դարձավ, որ գեներալ-մայոր Ֆ. Ալավերդովը գտնվելով գերմանական Համմել-Բուրգյան համակենտրոնացման ճամբարում, ենթարկվելով ամեն տեսակ զրկանքների, ծաղր ու ծանակի, երբեք չի ընկճվել, մինչև վերջը հավատարիմ է մնացել իր զինվորական երդմանը։ Արհամարհելով սովը, տաժանակիր աշխատանքը, ֆաշիստների կողմից հասցված վիրավորանքները, Ֆ. Ալավերդովը շարունակել է անկոտրուն կերպով պայքարել հիտլերյան ճիվաղների դեմ։ Գեներալ-մայոր Իվան Սեմյոնովիչ Նիկիտինի հետ մեկտեղ նա ճամբարում կազմակերպում է ընդհատակյա կազմակերպություն։ Այդ կազմակերպությունը պրոպագանդիստական մեծ աշխատանք է ծավալում ռազմագերիների շրջանում, ոգևորում գերիներին հաղթանակի հույսով, միշտ բարձր պահում գերիների հայրենասիրական ոգին, հաճախակի կազմակերպում գործադուլներ, փախուստներ։ Ֆաշիստներն իրազեկ դառնալով այս բոլորի մասին, 1942 թ. ապրիլին գեներալ-մայորներ Քրիստափոր Ալավերդովին և Իվան Նիկիտինին ենթարկում են մահապատժի[1]։

Հայ ժողովրդի արժանավոր զավակ՝ Սովետական Միության Մարշալ Իվան Բագրամյանի ֆոնդը հարստացավ բազմաթիվ հեռագրերով, նամակներով, բանաստեղծություններով։ Այդ փաստաթղթերից պարզ երևում է, որ Սովետական Բանակի հաջողություններով ուրախանում էին ոչ միայն մեր երկրի, այլև ամբողջ աշխարհի աշխատավորները։ Այդ են վկայում այն բոլոր նամակներն ու հեռագրերը, որոնք հասցեագրված են զորավար Բագրամյանին, նրան Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու կամ զինվորական աստիճանը բարձրացնելու առթիվ։ Դրանցից ուշագրավ են ընկ. ընկ. Ն. Խրուշչովի, Ա. Բուլգանինի, Մոնղոլական Ժողովրդական Ռեսպուբլիկայի նախագահ Չոյբալսանի, Մարշալ Ռոկոսովսկու, № 19 մանկատան սանների ու դաստիարակների, իր դպրոցական ուսուցիչ Վ. Գոլուբյատնիկովի, Նյու-Յորքի Կովկասահայ ընկերության անդամների և շատ ուրիշների հեռագրերը։ Բերենք դրանցից մեկը։ Հարևան մոնղոլ ժողովրդի զեկավար Չոյբալսանը 1944 թ. գրել է.

„Передаю свои самые сердечные поздравления в связи с присвоением Вам звания Героя Советского Союза. Желаю новых успехов в борьбе с немецко-фашистскими захватчиками и скорейшего разгрома врага, а Вам лично — доброго здоровья. Чойбалсан“[2].

---

[1] Տե՛ս „Красная звезда“, № 28, 29, 31 августа, 1956, № 199, 200, 202.

[2] Հայրենական պատերազմի պատմության կաբինետի արխիվ, ֆ. 9, գործ 20, թերթ 27։

Զևոք բերված նյութերի մեջ առանձնապես մեծ հետաքրքրություն է ներկայացնում գեներալ-մայոր Բենիամին Հովհաննեսի Գալստյանի անձնական փաստաթղթերի և լուսանկարների արխիվը, որը գտնվում էր Գալստյանի այրու՝ Անահիտ Մովսիսյանի մոտ։

Լենինգրադում ո՞վ չէր ճանաչում՝ սկզբում դիվիզիայի կոմիսար, իսկ այնուհետև բանակի Ռազմական խորհրդի անդամ Բ. Հ. Գալստյանին։

Նա 16 տարեկան հասակից կամավոր մտել էր նորաստեղծ Կարմիր Բանակի շարքերը և անցել երեք պատերազմների բովով։

Առաջին անգամ Գալստյանը մասնակցել է Հայաստանի քաղաքացիական կռիվներին։ 1939—1940-ական թվականներին, «Մաններհայմի» գծի ճեղքմանը, իսկ 1941—1942 թթ. Լենինգրադի դաժան բլոկադայի օրերին հերոսաբար պաշտպանել է ռևոլյուցիայի օրրանը։

Մարտի ժամանակ նա միշտ գտնվում էր առաջավոր դիրքերում և իր անձնական օրինակով ոգևորում մարտիկներին։ Բենիամին Գալստյանը կապված էր իր մարտիկների հետ. հոգ էր տանում նրանց համար և գնահատում յուրաքանչյուրին ըստ արժանվույն։ Նա մարտիկների անբաժան ընկերն էր։ Այդ էր պատճառը, որ դիվիզիայում բոլորը սիրում և մեծ հարգանքով էին վերաբերվում նրան։ Այդ է վկայում այն նամակը, որ գրել են մի խումբ մարտիկներ և հրամանատարներ 1942 թ. հոկտեմբերի 27-ին.

„В радостные для нас дни преобразования нашей дивизии в гвардейскую все наши мысли и чувства обращены к Вам, одному из наших руководителей и воспитателей. На протяжении длительного времени своей неутомимой энергией Вы много сделали для сколачивания наших подразделений и повышения боеспособности дивизии. Вы воспитали в нас чувство фанатической ненависти к немецким оккупантам и неуклонное стремление к мщению за нашу поруганную землю, за кровь и слезы соген тысяч и миллионов советских людей.

Вы один из первых своими повседневными указаниями нацеливали нас на завоевание в жестоких боях почетного гвардейского знамени.

И теперь настал этот радостный для нас день. Советский народ, партия и правительство высоко оценили наши боевые действия. Мы вправе считать Вас, дорогой бригадный комиссар, отцом и душой воспитанных Вами гвардейцев, соучастником наших боевых дел и в ряду славных гвардейцев, бывшей семидесятой, ныне 45-й гвардейской, первым гвардейцем.

Мы заверяем Вас, что в предстоящих боях мы отбросим ненавистного врага от стен Ленинграда, уничтожим его и пронесем наше боевое гвардейское знамя вперед на Запад“[1].

Լենինգրադցիները մեծ հարգանքով են խոսում իրենց քաղաքի ջերմ հայրենասերների մասին։ Գեներալ-մայոր Գալստյանի հիշատակը հավերժացնելու համար[2], Լենինգրադի աշխատավորները և Լենինգրադի ռազմական

[1] ՀՊՊԿ արխիվ, ֆ. 28, գ. 4, թ. 2—3։

[2] Զոհվել է 1942 թ. դեկտեմբերի 4-ին, Պուլկովյան բարձունքներում։

սկրուգը Ալեքսանդր Նևսկու լավրայում կանգնեցրել են նրա մարմարյա հուշարձանը։ Այժմ Գալատյանի անունն են կրում պատերազմի ժամանակ ռազմամթերքներ արտադրող Լենինգրադի մի գործարանը և նորակառույց փողոցներից մեկը[1]։ Գալատյանի անունն է կրում նաև նրա ծննդավայրը՝ Ախուրյանի շրջանի Ճլոխան գյուղը, որն այժմ վերանվանված է Բենիամին։

Արժեքավոր փաստաթղթերով հարստացավ հրետանու գեներալ-մայոր Նիկոլայ Ալեքսանդրի Հովհաննիսյանի ֆոնդը։

Ձեռք բերված փաստաթղթերը պարզ պատկերացում են տալիս հմուտ զինվորական Նիկոլայ Հովհաննիսյանի կյանքի և մարտական ուղու մասին։ Նա դեռ շատ երիտասարդ էր, որ մասնակցեց քաղաքացիական կռիվներին, ապա նրա ղեկավարությամբ գործող հրետանավորները իրենց կրակով ավերում էին թշնամու ամրությունները Կարելական պարանոցում և Մաններհայմի գծում։

Հայրենական պատերազմի սկզբնական շրջանում Ն. Հովհաննիսյանը գտնվում էր Լենինգրադում։ Այդտեղ նա մասնակցեց բլոկադան վերացնելու համար մղվող մարտերին։

Այնուհետև, Օրյոլ–Կուրսկ հայանի օպերացիայի ժամանակ Հովհաննիսյանի հրետանավորները ճանապարհ են բացում հարձակվող սովետական զորքերի համար։ Այստեղ ևս գնդապետը հանդես է բերում ռազմական իր ողջ հմտությունը և խիզախությունը։

Ուկրաինական ՍՍՌ տերիտորիան ֆաշիստական հորդաներից մաքրելու մարտերին ակտիվ մասնակցելու համար, ուկրաինական երախտապարտ ժողովուրդը իր շնորհակալական խոսքն է ուղղում գվարդիայի գնդապետ Նիկոլայ Հովհաննիսյանին[2]։

Դրանից հետո գվարդիայի գնդապետ Ն. Ա. Հովհաննիսյանի հրետանավորները աչքի ընկան Լվով, Պերեմիշլ, Յարոսլավլ քաղաքների գրավման մարտերին և Սանդոմիրի պատմական օպերացիային։ Այս շրջանի փաստաթղթերից պահպանված է գնդապետի ձեռքով գրած նամակը իր որդուն՝ Ռեմիկ Հովհաննիսյանին[3]։

„23. 7. 44. Լվով

Здравствуй дорогой и родной сынок Рэмик ջան! ...Разреши, мой молодой капитан, поздравить тебя с днем рождения, исполнением 20 лет.

Желаю тебе, мой любимый сыночек, долгих лет жизни, процветания, радостной жизни и счастья...

Сынок мой ненаглядный!

Мы, как явствует из данных Совинформбюро, начали операции на Львовском направлении. Успехи величавые. Прошли большое расстояние, вышли на коммуникации неприятеля и закрыли ему пути отхода на Запад. Это тебе наилучший подарок ко дню твоего рождения. Пишу эти строки под гром и молнию артиллерийской канонады, авиа-

[1] „Ленинградская правда", 1956, հունվար, № 3 (12420)։

[2] ՀՊՊԿ արխիվ, ֆ. 45, դ. 5, թ. 2։

[3] Ռեմիկ Նիկոլայի Հովհաննիսյանը 18 տարեկան հասակից մեկնել է ռազմաճակատ և բազմիցս պարգևատրվել։ Այժմ հրետանու փոխգնդապետ է և ծառայում է Լենինգրադում։

ционной обработки, плюс непрерывный ливень. Такова обстановка и условия операции... Крепко-прекрепко целую, твой папа"[1].

Այդ կրակի տարափի տակ անդամ նա չի մոռանում իր ծնողական պարտքը, շնորհավորում է որդու ծննդյան օրը և ողևորում նրան Սովետական Բանակի հաղթանակի հաստատ հավատով։

Լվովի մարտերում առանձնապես աչքի ընկնելու համար նրան 1944 թ. նոյեմբերի 19-ին շնորհվում է հրետանու դիվիզիոն-մայորի կոչում։

Հետագայում Հովհաննիսյանը մասնակցել է Լեհաստանի ազատագրման և գերմանական մի շարք քաղաքների գրավման մարտերին։ Նա դաժան ու արյունահեղ մարտերով ճանապարհ հարթեց հաղթանակի համար, բայց հաղթանակի փառահեղ օրը, դժբախտաբար չտեսավ. նա զոհվեց 1945 թ. ապրիլին Բեռլինի համար մղվող մարտերում։

Հայրենական Մեծ պատերազմում հերոսության չգերազանցված օրինակներ ցուցաբերեց սովետական երիտասարդությունը, նրա առաջավոր ջոկատը՝ Լենինյան Կոմերիտմիությունը, որի շարքերում են դաստիարակվել մեր Հայրենիքի արժանավոր բազմահազար զավակներ։

Այդպիսիներից է հայ ժողովրդի պանծալի զավակ, ավագ լեյտենանտ Վարդան Ալեքսանդրի Տոնիյանը։ Բնութագրելով Վ. Ա. Տոնիյանին, Սովետական Միության Մարշալ Ի. Բ. Բագրամյանը գրել է.

„Образ Вартана - славного героя Великой Отечественной войны глубоко и навсегда запал в мою душу и никогда не изгладится из памяти"[2].

Ռազմաճակատում ո՞վ չէր ճանաչում համաձակ, խիզախ, մարտական հրամանները ժամանակին կատարող 22-ամյա երիտասարդ հրամանատարին, որը հմտության, մարտի տակտիկան լավագույն տիրապետելու շնորհիվ վայելում էր ինքնագնաց հրանոթային դնդի ողջ անձնակազմի սերն ու հարգանքը։

Նույնպիսի սեր և հարգանք նա վայելում էր նաև Սամարկանդում, այն դպրոցում, որտեղ ստացել էր իր միջնակարգ կրթությունը։ Ընկերները լավ էին ճանաչում Վարդանին, այդ պատճառով էլ, երբ նա ռազմաճակատ էր մեկնում, նրան հանձնեցին իրենց նամակը, որտեղ գրում են.

„Дорогой друг Вартан!

В этот знаменательный день, когда ты уходишь от нас защищать нашу Родину от оголтелых фашистов..., наше общее пожелание тебе, Вартан, быть беспощадным к врагам нашей Родины...

Будь тверд, выносливый, дисциплинирован, будь таким, каким тебя воспитала наша школа! Будь предан нашей горячо любимой Родине, за которую не страшись отдать и свою жизнь!"[3].

Ընկերների այս գրավոր խոսքին Տոնիյանը պատասխանեց շատ պարզ

---

[1] ՀՊՊԿ արխիվ, ֆ. 45, գ. 7, թ. 3—4։

[2] Վերցված է այն մակագրությունից, որ կատարել է Մարշալ Ի. Բ. Բագրամյանը 1957 թ. մարտի 9-ին Վ. Ա. Տոնիյանի ամրողջացած գործի վրա, որը նա հանձնեց մեր կաբինետին։

[3] Ավագ լեյտենանտ Ա. Վ. Տոնիյանի գործը, թ. 36—37։

և հատակ. «կարող ենք չկասկածել, բարեկամներս, Վարդանը չի թողնի ձեզ ամոթով...»[1]

Վարդանը իրոք միշտ բարձր պահեց իր խոստումը։

Յուրաքանչյուր մարտից առաջ նա պատկերացնում էր սիրելի ընկերներին և նրանց տված իր խոստումը. նա հավատարիմ ընկեր էր ինչպես դպրոցում, այնպես էլ ռազմաճակատում։ Այդ են վկայում այն բազմաթիվ մարտերը, որոնք նա մղել է Հայրենական Մեծ պատերազմի տարիներին։ Ահա դրանցից մեկը։

... 1945 թ. հունվարի 14։ Արևելյան Պրուսիա։

Ավագ լեյտենանտ Վ. Տոնիյանը իր ինքնագնաց հրանոթի անձնակազմով, կատաղի կրակ տեղալով թշնամու ամրությունների վրա, առաջինն է ճեղքում նրա այդ հատվածի պաշտպանությունը, ներխուժում հակառակորդի հետևակի մարտակարգերը և ոչնչացնում «Ֆերդինանդ» տիպի ինքնագնաց երկու հրանոթ, որոնց անձնակազմին գերի վերցնում, ապա գնդացրային կրակով և նռնակներով ոչնչացնում է հակառակորդի մոտ երկու ջոկ։ Այնուհետև զարգացնելով հարձակումը առաջ է շարժվում մոտ քառասուն կիլոմետր, որով ապահովում Արևելյան Պրուսիայի՝ Եդվարնո, Ալլենդորֆ, Յանովա, Պասսենհայմ քաղաքների գրավումը։ Փետրվարի 7-ին շարունակելով առաջխաղացումը, Ֆրայմարկտ բնակավայրի ուղղությամբ Տոնիյանն ինչպես միշտ, այս անգամ ևս անցնում է մեր հետևակի առաջին շարքերը և իր ինքնագնաց հրանոթով հնձում կատաղի դիմադրություն ցույց տվող թշնամուն։ Թշնամին նրա վրա բաց է անում մրրկային կրակ և ճակատային հարվածով շարքից հանում Տոնիյանի մարտական մեքենան։ Վիրավորվում են հրամանատարն ու իր երեք մարտական ընկերները։ Այդ վիճակում անգամ մարտիկների հավատարիմ ընկեր Տոնիյանը հասնում է նրանց օգնություն։ Սկզբում նրան հաջողվում է վիրավորներից երկուսին դուրս բերել այրվող մեքենայից և անվտանգ հասցնել ավելի ապահով տեղ, բայց երրորդ ընկերոջը փրկելիս թշնամու գնդացրի կրակահերթից առհավետ դադարում է բաբախել կյանքով լի երիտասարդ Տոնիյանի սիրտը, որը երազում էր հաղթանակով վերադարձի և ապագա երջանիկ կյանքի մասին։

Ահա թե ինչ է գրում Տոնիյանը մարտից առաջ իր ծնողներին.

„... Родные мои! Скоро Новый год. Он принесет нам счастье и радость. В 45-м году закончим войну. Это — последний год. Дальше — радостная, светлая жизнь"[2].

Բացի վերոհիշյալ փաստաթղթերից, Վարդան Տոնիյանի անձնական գործում կան պարգևաթերթիկներ, մարտական բնութագրեր, հոդվածներ, նամակներ, հուշեր, լուսանկարներ, որոնք բոլորը միասին տալիս են Տոնիյանի հերոսական կյանքի վառ պատկերացումը։

Մեկը մյուսից հուզիչ են Սովետական Բանակի Կենտրոնական թանգարանում ցուցադրվող էքսպոնատները, ստենդները, լուսանկարները, մարտական բնութագրերը և շրջապատակերները։ Այդտեղ տեղ են գտել մեր լայնածավալ երկրի բոլոր ազգությունների ներկայացուցիչները։ Այդտեղ կարելի

[1] Ավագ լեյտենանտ Ա. Վ. Տոնիյանի գործը, թ. 36—37։
[2] Նույն տեղում։

է տեսնել ռուս ռազմիկի կողքին թե՛ ուկրաինացի, թե՛ բելոռուս, թե՛ ուզբեկ, թե՛ դաղախ և թե՛ հայ ռազմիկի, որոնք մարտնչելով տարբեր ռազմաճակատներում, ցուցաբերեցին խիզախության, հաստատակամության և հերոսության անձնուրաց օրինակներ։

Թանդարանի վեցերորդ սրահում այցելուների ուշադրությունն է դրավում ավագ լեյտենանտ Արտաշես Ալեքսանդրի Գամարյանի Կոմ. պարտիայի թեկնածուական տոմսը՝ խոցված թշնամու արկի բեկորով։ Սանդի ներքևում գրված տողերը պատմում են նրա մարտական կարճ, բայց հերոսական ուղու մասին։

Հայրենական պատերազմի առաջին օրերից, տանկային գորամասերից մեկում մարտնչում էր կոմունիստ ավագ լեյտենանտ Գամարյանը։ Փաջ ծանոթ լինելով ռազմական գործին, երիտասարդ հրամանատարը ռազմաճակատի ծանր պայմաններում անդամ շարունակում էր սովորել և սովորեցնել իր մարտիկներին։

Ստալինգրադի հերոսական պաշտպանության օրերին ավագ լեյտենանտ Գամարյանի վաշտը Արևմտյան ռազմաճակատում մղում էր ակտիվ մարտական գործողություններ՝ թշնամու կենդանի ուժին և տեխնիկային պատճառելով մեծ կորուստներ։ Անվախ հրամանատարի անձնական խիզախությունը և արիությունը նորանոր սխրագործությունների էր ոգեշնչում իր մարտիկներին։ Վերջին մարտում Գամարյանի կատարած սխրագործությունը տանկային բրիգադայի քաղրաժինը բնութագրում է հետևյալ կերպ.

„...27. 8. 1942 года в боях в районе д. Леоново тов. Гамарьян водил свою роту 2 раза в атаку. Машина, на которой находился Гамарьян, уничтожила ПТО и 3 пулемета противника с прислугой. Попав под перекрестный огонь противника и противотанковых пушек, машина Гамарьяна была пробита в башню термитным снарядом, сам Гамарьян был ранен.

Но тов. Гамарьян А. А. не покинул машины, а продолжал вести огонь и давить пехоту противника. И при втором попадании термитного снаряда в лобовую часть танка был убит стрелок радист и убит Гамарьян прямым попаданием в грудь.

Так героически погиб кандидат в члены ВКП(б) командир 3-й роты старший лейтенант Гамарьян Арташес Александрович"[1].

Ռուսական Բանակի Կենտրոնական թանդարանի ֆոնդերում պահվում են ավագ լեյտենանտ Ա. Գամարյանի մարտական ընկերների հուշերը նրա մասին։

Կապիտան Կրուտոլինը Գամարյանի առաջին մարտի մասին գրում է.

„...5. 7. 42 г., участвуя в бою под д. Кабала (Тульская обл.), смело и решительно вел свой танк и взвод на огневые точки врага. Своей решительностью и беззаветной храбростью увлекал за собой весь взвод, лично руководя боем, образцово выполняя поставленную задачу.

[1] Центральный музей Советской Армии, ф. Герои Великой Отечественной войны, д. танкиста ст. лей-та А. А. Гамарьяна, л. 4.

Будучи раненым, не оставил поля боя, в рядах наступающей пехоты двигался вперёд, увлекая за собой остальных бойцов...“[1].

Իսկ կապիտան Պուշկարևը գրում է.

„Если Вам предложат найти образец простоты, скромности и беззаветной храбрости, то такого человека надо было искать в командире танковой роты ст. лей-те Гамарьян Арташес Александровиче...

О его исполнительности ходили легенды. Он готов был бежать стрелой, делать геркулесову работу, чтобы только не видеть нахмуренного взгляда командира...“[2]

Սովետական Բանակի Կենտրոնական Թանգարանի ֆոնդերումն են պահվում Սովետական Միության Հերոս Կոնստանդին Ալեքսանդրի Նազարովին վերաբերող նյութերը։

Ստալինգրադից մինչև թշնամու տերիտորիան է հասել հակատանկային հրանոթի հրամանատար, Սովետական Միության Հերոս մայոր Կ. Ա. Նազարովը։

Ուշագրավ է Կ. Ա. Նազարովի ելույթը Մոսկվայի ռադիոյով 1951 թ. մարտի 12-ին։ Ելույթում նա պատմում էր իր հրանոթային անձնակազմի վարած մարտերի մասին և առանձնապես կանգ է առնում այն դրվագության նկարագրության վրա, որ տեղի է ունեցել Վիսլա գետի վտակ Նարևի ափին պլացդարմ գրավելու համար 1944 թ. հոկտեմբերի 4—7-ը։

Նարևի ափին պլացդարմ գրավելու համար մղվող մարտերին Նազարովի ստորաբաժանման մարտիկները ցուցաբերեցին այնպիսի անձնուրացության օրինակներ, որոնք հատուկ են միայն Սովետական Բանակի ռազմիկներին։

Գերմանական տանկային դրոհները երեք օր շարունակ հետ շպրտելու, Նարև գետի ափին պլացդարմ գրավելու, այդ պլացդարմը իրենց ձեռքին պահելու, թշնամու կենդանի ուժին և տեխնիկային մեծ կորուստներ պատճառելու համար ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահությունը 1945 թ. փետրվարի 21-ի հրամանագրով մայոր Նազարովին, նշանառու Ուլանինին և ավագ Իվանիլովին շնորհում է Սովետական Միության Հերոսի կոչում, իսկ անձնակազմի մյուս անդամներին պարգևատրում կառավարական շքանշաններով և մեդալներով։

Այս առթիվ Բելոռուսական առաջին ռազմաճակատի հրետանու հրամանատար գեներալ-գնդապետ Բ. Կազակովը փետրվարի 26-ի իր շնորհավորական հեռագիրը վերջացնում է հետևյալ տողերով.

„... Поздравляю Вас с высшей правительственной наградой, желаю успехов в дальнейшей борьбе с немецкими захватчиками“[3].

Ուշագրավ են Սովետական Բանակի Կենտրոնական թանգարանից ձեռք բերված Սովետական Բանակի Բաղվարչության կողմից Հայրենական Մեծ պա-

---

[1] ЦМСА. ф. Герои Великой Отеч. войны, д. танкиста ст. л-та А. А. Гамарьяна, л. 9.

[2] Там же, л. 14.

[3] ЦМСА. ф. Герои Советского Союза, д. майора К. А. Назарова, инв. № 4/19576.

տերտղմի տարիներին հայերեն լեզվով և հայերի մասին հրատարակված մի շարք թերթիկներ և կոչեր։

Զեռք բերած թերթիկներից հետաքրքիր է Սովետական Միության կրկնակի հերոս, գվարդիայի փոխգնդապետ Նելսոն Գեորգի Ստեփանյանին նվիրված թերթիկը, որը լույս է տեսել դեռևս Ստեփանյանին առաջին անգամ Սովետական Միության Հերոսի կոչում (1942 թ. հոկտեմբերի 23) շնորհելիս։ Թերթիկի վերևում զետեղված է Ն. Ստեփանյանի դիմանկարը, իսկ ներքևում նրա նամակներից մի կտոր. «Քանի դեռ բարախում է սիրտս, իմ սրբազան պարտքն է, մինչև արյանս վերջին կաթիլը պաշտպանել իմ սիրելի հայրենիքը, մեր հիանալի սովետական ժողովուրդը»։

Հայ ժողովրդի արժանավոր զավակի խոսքը իրոք գործից չտարբերվեց։ Քանի դեռ բարախում էր նրա սիրտը Ստեփանյանը մինչև վերջին կաթիլ արյունը մարտնչեց իր Հայրենիքի անկախության և ժողովրդի ազատության համար։ Ստեփանյանն իր գրոհիչ օդանավով կրակի լավա էր տեղում թշնամու գլխին։ «Բալթյան մրրկահավը», այդպես էին անվանում Ստեփանյանին նրա ընկերները, դանում էր թշնամուն, որտեղ էլ նա թաքնված լիներ։ Ստեփանյանը կատարյալ մահ էր սփռում թշնամու վրա։ Բավական է ասել, որ նա իր կատարած 239 մարտական թռիչքների ընթացքում ոչնչացրել է ֆաշիստական 600 ավտոմեքենա, ավելի քան 100 տանկ, 300-ից ավելի թնդանոթ, 27 ռազմական ինքնաթիռ, մեկ շոգեքարշ, 40 վագոն, հարյուրավոր հիտլերականների և ջրասույզ արել 13 տարբեր տիպի նավեր։

Ստեփանյանը Կարմրադրոշ Բալթիական նավատորմի թեևավոր դյուցազուններից մեկն էր, որն արժանացավ սովետական ժողովրդի, ամբողջ մարդկության հիացմունքին։

Սովետական Միության Գերագույն Սովետի Նախագահությունը 1945 թ. մարտի 6-ին իր հատուկ հրամանագրով գրոհիչ օդաչու Նելսոն Գեորգի Ստեփանյանին հետմահու շնորհեց երկրորդ անգամ Սովետական Միության Հերոսի կոչում և ընդունեց որոշում Ստեփանյանի բրոնզե կիսանդրին կերտել և կանգնեցնել հերոսի հայրենիքում[2]։ Այժմ Երևանի Ս. Մ. Կիրովի անվան մանկական պուրակում և հերոսի ծննդավայր Լենոային Լարարադի Շուշի քաղաքում կանգնեցված են Ստեփանյանի բրոնզե կիսանդրիները։ Հերոսի հիշատակի հավերժացման կապակցությամբ պիոներական մի քանի դրուժիներ և Երևանի № 40 մանկապարտեզը Ստեփանյանի անունն են կրում։

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահությունը 1944 թ. սեպտեմբերի 2-ի հրամանագրով Հայկական ՍՍՌ մի շարք միջնակարգ դպրոցների, այդ թվում Երևանի Մաքսիմ Գորկու անվան միջնակարգ դպրոցին ևս, որտեղ սովորել և դաստիարակվել էր Սովետական Միության Հերոս Նելսոն Ստեփանյանը, պարգևատրեց Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի պատվոգրով[3]։

Արժեքավոր է Սովետական Միության Հերոս, գվարդիայի լեյտենանտ Ֆեոդոր Իսայի Սարգիսովի մարտական ուղուն նվիրված թերթիկը։ Հայրենական

---

[1] ЦМСА, ф. Герои Советского Союза, фотолистовка № 69510.

[2] ՀՊՊԿ արխիվ, ֆ. 13, գ. 2, թ. 6)։

[3] «Սովետական Հայաստան», 3 սեպտեմբերի, 1944, № 176։

պատերազմի սկզբում Կուբանի Նովո-Պոկրովսկի գյուղի «Նովիյ միրա» կոլտնտեսության նախագահ Թեոդոր Սարգիսովը իր կոլտնտեսության հայ և կազակ անդամներից կազմակերպում է աշխարհազորային մեկ հեծյալ էսկադրոն և մեկնում ռազմաճակատ...

1943 թ. հոկտեմբեր: Ծանր մարտեր էին մղվում երկաթուղային խոշոր հանգույց Մելիտոպոլ քաղաքի համար: Այդտեղ էր այն զորամասը, որի գումարտակներից մեկի պարտկազմակերպիչն էր Թեոդոր Սարգիսովը: Մելիտոպոլը գերմանացիների դեպի Ղրիմ տանող և Դնեպրի ներքին հոսանքի վերջին հենակետն էր: Թշնամին այդ հատվածում կենտրոնացրել էր մեծ քանակությամբ ինքնագնաց հրանոթներ և տանկեր: Սովետական զրահարարները, որոնց թվում և պարտկազմակերպիչ Սարգիսովը կենաց և մահու կռիվ էին մղում: Մարտը բավական անսովոր էր և ծանր. քայլ առ քայլ հետապնդելով համառ դիմադրություն ցույց տվող թշնամուն, գումարտակը գրավում է ջրադացը, էլևատորը, էլեկտրակայանը: Բայց հիտլերականները համառորեն իրենց ձեռքումն էին պահում քաղաքի կայարանը՝ այն վերածելով դիմադրության հիմնական հանգույցի:

Հրամանատարությունը հրաման է տալիս կարճ ժամանակում գրավել Մելիտոպոլ կայարանը: Այդ պատասխանատու առաջադրանքի կատարումը դրվում է այն ջոկի վրա, որը ղեկավարում էր պարտկազմակերպիչ Թեոդոր Սարգիսովը: Լեյտենանտ Սարգիսովը մի խումբ մարտիկների գլուխն անցած ակտիվ է կայարանի գրոհումը:

Ինչով մարտերը դառնում էին ավելի կատաղի և վճռական: Հարձակվող զրահարարների վիճակը գնալով ծանրանում էր: Թշնամին այդ փոքրաթիվ խմբի վրա բաց էր արել շախմատաձև կրակ, բայց ոչ ֆաշիստների համառ դիմադրությունը և ոչ էլ նրանց մրրկային կրակը չկանգնեցրին հարձակվող սովետական ռազմիկների առաջխաղացումը: Սովետական գինվորների երկաթյա կամքով ջարդվեց հիտլերականների համառ դիմադրությունը, դադարեցվեց նրանց ավտոմատների և գնդացիրների չլռող կրակը:

Մելիտոպոլ կայարանի վրա սորից ծածանվեց Կարմիր դրոշը[1]: Հրամանատարության առաջադրանքը օրինակելիորեն կատարելու համար գվարդիայի լեյտենանտ Ֆ. Ի. Սարգիսովին շնորհվեց Սովետական Միության Հերոսի կոչում: Այնուհետև Սարգիսովը մարտերով հասավ Լիտվայի սերիտորիան և մասնակցեց Լիտվական ՍՍՌ-ի ազատագրման մարտերին, որտեղ և զոհվեց 1944 թ. հոկտեմբերի 8-ին[2]:

Մոսկվայի Բաումանի շրջանի գինվորական կոմիսարիատում նոր գինակոչիկների ուշադրությունն է գրավում գունավոր, նկարագարդ մեկ պլակատ՝ նվիրված Մոսկվայի պաշտպանության ժամանակ զոհված ջոկի հրամանատար Վորոն Նարիմանյանի և իր փոքրաթիվ քաջերի սխրագործություններին:

1941 թ. աշնանը մինչև ատամները զինված հիտլերականները շարժվում էին դեպի Մոսկվա: Մեր զորքերն անձնազոհաբար մարտնչում էին յուրաքանչյուր թիզ հողի համար, ոչնչացնում էին թշնամու տեխնիկան և շարքից հանում կենդանի ուժի մեծ քանակությունը: Չնայած մեծաթիվ կորուստներին,

---

[1] ЦМСА, ф. Герои Советского Союза, фотолистовка № 69457—69458.

[2] Там же, фотолистовка № 69511.

այնուամենայնիվ թշնամին հույս ուներ, թե հայրենական արդեն մոտ է, այդ պատճառով էլ նա անընդհատ դուրս էր բերում իր պահեստային ուժերը:

Շտաբով Սովետական Գերագույն հրամանատարությունը մշակում է թշնամու ուժերի ջախջախման պլանը Մոսկվայի տակ:

Մոսկվայի պաշտպանների շարքերումն էր նաև հայ ժողովրդի զավակ Խորին Նարիմանյանը: Նա Մոսկվայի պաշտպանության հատվածներից մեկում կատարում էր շատ կարևոր առաջադրանք՝ միավորման շտաբին հեռախոսով տեղեկացնում էր գերմանացիների առաջ շարժման և տեղադրամասերման մասին: Այդպիսի տեղեկությունները ժամանակին ստանալը շատ կարևոր էր հատկապես այն օրերին, երբ սովետական հրամանատարությունը պատրաստում էր վճռական հակահարվածի:

Իսկոմերության գրասենյակ օրերից մեկն էր: Հիտլերականները նոր հարձակման անցնելով ցանկանում էին գրավել այն ընագիծը, որի համար կռիվ էին մղում Նարիմանյանի գինվորները: Ֆաշիստների մրրկային կրակին շեշտակի կրակով էին պատասխանում սովետական գինվորները: Սովետական մարտիկների շարքերը գնալով նոսրանում էին, ռազմամթերքը քչանում, բայց այդ վիճակում ևս, անելիք սովետական մարտիկները շարունակում էին կռվել թշնամու գերակշիռ ուժերի դեմ: Ինքը, Նարիմանյանը աջ ձեռքում պահելով ավտոմատը, անխնա ոչնչացնում էր հիտլերականներին, իսկ ձախ ձեռքից բաց չէր թողնում հեռախոսափողը, շարունակում էր շտաբին հաղորդել նոր տեղեկություններ:

Այդպես մի քանի ժամ շարունակ Նարիմանյանն իր փոքրիկ ջոկով հերոսաբար պաշտպանում էր այն ընագիծը, որի պաշտպանությունը հանձնված էր նրան:

Հանկարծ Նարիմանյանի հեռախոսը լռեց...

Մի քանի ժամ հետո, երբ սովետական զորամասերն անցան հակահարձակման, հասան այն ընագծին, որը Նարիմանյանի ջոկն էր պաշտպանում, նրանք տեսան մեծ թվով անշնչացած ֆաշիստների և նրանց կողքին դատարկ գոնված Նարիմանյանին և իր մարտական ընկերներին:

Գնդապետ Անդրանիկ Սարգսյանից ձեռք է բերված ավելի քան 20 զանազան փաստաթղթեր, մի շարք լուսանկարներ և մեկ մարտական քարտեզ, որոնք բոլորն էլ ցույց են տալիս ինչպես իր՝ գնդապետ Անդրանիկ Սարգսյանի, այնպես էլ նրա գոնված եղբոր՝ գեներալ-մայոր Աշոտ Սարգսյանի փոխգորկալի կյանքը:

Աշոտ Սարգսի Սարգսյանը հագվագյուտ խիզախ գինվորական էր, օժտված բացառիկ ընդունակություններով, երևելի հեծյալ, կարգապահ հրամանատար և գարմանալի կազմակերպիչ: Այդ են վկայում նրա բոլոր ընկերները, գինակիցները, ճանաչողները, ծանոթները և նրա մասին եղած բոլոր փաստաթղթերը:

18 տարեկան էր ապագա գեներալ-մայոր Սարգսյանը, երբ Զամբրակի և Զանգեզուրի ճակատներում մասնակցեց դաշնակ-ավանտյուրիստների լիկվիդացման մարտերին, որոնց աչքի ընկնելու համար պարգևատրվեց Կարմիր Աստղի առաջին շքանշանով:

Ապագա շինարարական տարիներին ևս Ա. Ս. Սարգսյանը իր կյանքը նվիրեց գինվորական գործին:

Ստանալով ռազմական բարձրագույն կրթություն նա իր գիտելիքներն ավելի ամրապնդեց և ռազմական գործի անթերի իմացությունները զուգակցեց ռազմական գիտության, պատմության և ստրատեգիայի ուսումնասիրման հետ։ Այդ ողջ գիտելիքները գնդապետ Սարգսյանը առաջին անգամ ի սպաս դրեց եղբայրական՝ բելոռուս և ուկրաինացի ժողովուրդների ազատագրման գործին։ Մասնակցելով Արևմտյան Ուկրաինայի ազատագրման կամպանիային, նա առաջինը մտավ Լվով քաղաքը։ Այդ գործողության փայլուն կազմակերպման համար գնդապետ Սարգսյանը պարգևատրվեց երկրորդ Կարմիր Աստղի շքանշանով և արժանացավ գեներալ-մայորի զինվորական կոչմանը։

Գեներալ-մայոր Աշոտ Սարգսյանը այն հայ զորավարներից է, որն առաջինը կրեց իր վրա հիտլերականների հարվածը։ Նրա հրամանատարությամբ գործող մոտո-հրաձգային դիվիզիան հերոսաբար դիմադրեց ֆաշիստներին և կործանիչ հարվածներ հասցրեց նրանց։ Մի քանի ամիս շարունակ համառ և արյունահեղ մարտեր մղելով հարձակվող թշնամու դեմ, դիվիզիան մինչև վերջին հնարավորությունը պաշտպանում էր սովետական հողի ամեն մի թիզը։ Գնալով մարտերը ավելի կատաղի բնույթ էին կրում։ Գեներալ Սարգսյանը տոգորված հաղթանակի վառ հավատով, զոհվելուց[1] մի քանի օր առաջ իր յոթ տարեկան որդուն գրում է. «Էդիկ ջան, տղամարդ կաց և մամայի հետ ուրախ ու քաջ եղիր։ Ֆաշիստներին վերջ ի վերջո ջախջախելու են»[2]։

Ի հավերժացումն հերոս գեներալի հիշատակի, նրա համադյուղացիների ցանկությամբ Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության հրամանագրով Սարգսյանի ծննդավայր՝ Սիսիանի շրջանի Ադքենդ գյուղը վերանվանվեց Աշոտավան։

Վերոհիշյալ նյութերից բացի, կաբինետի արխիվը հարստացավ նաև Իվան Վիքիլովի, Միքայել Պարսեղովի, Բագրատ Առուշանյանի, Ստեփան Կինոսյանի, Արթուր Գյուլչարյանցի, գնդապետ Ղարիբջան Ղարիբջանյանի, Թամանյան հայկական դիվիզիայի զինծիշտ Վրույր Ադիզյանի և շատ ուրիշների նյութերով։

Ընդամենը ձեռք է բերված 230 լուսանկար ու նեգատիվ, մեկ մարտական քարտեզ և 359 զանազան փաստաթղթեր։

Սերտ կապ ստեղծվեց Հայրենական պատերազմի աչքի ընկնող զորավարների և ռազմիկների հետ, որոնք հետաքրքրվում են մեծ սիրով կոժանդակեն Հայրենական պատերազմի պատմության կաբինետի հարստացմանը և Հայրենական պատերազմին հայ ժողովրդի մասնակցության ավելի լավ լուսաբանմանը։

Ֆ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

---

[1] Գեներալ-մայոր Աշոտ Սարգսյանը զոհվել է 1941 թ. սեպտեմբերի 17-ին, Վիննիցայի շրջանի համար մղվող մարտերում և թաղված է Ուկրաինայի մայրաքաղաք Կիևում։

[2] ՀՊՊԿ արխիվ, ֆ. 51, գ. 1, թերթ 17։